ՀԵԼՍԻՆԿՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՍԱՄԲԼԵԱՅԻ
ՎԱՆԱՁՈՐԻ ԳՐԱՍԵՆՅԱԿ
HELSINKI CITIZENS' ASSEMBLY
VANADZOR OFFICE

2001 Հայաստանի Հանրապետություն,
Վանաձոր Տիգրան Մեծի պողոտա 59
59 Tigran Metsi st.
Vanadzor, 2001, Republic of Armenia
Tel. (հեռ.) (374 322) 4 22 68
Fax (ֆաքս) (374 322) 4 12 36
E-mail: hcav@hcav.am

Ե/2014-14. 04/158
14.04.2014 թ.

ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի
նախագահ Գագիկ Խաչատրյանին

Հարգելի պարոն Խաչատրյան,

2014 թվականի ապրիլի 2-ին ՀՀ Սահմանադրական դատարանի կողմից կայացված թիվ ՍԴՈ 1142 որոշումից հետո Կազմակերպության[1] աշխատակիցներ Արայիկ Զալյանը, Օֆելյա Զալյանը, Արտուր Հարությունյանը, Սյուզաննա Սողոմոնյանը, Տաթևիկ Սիրադեղյանը, Անահիտ Չիլինգարյանը, Սուսաննա Դավթյանը, Հասմիկ Կարապետյանը, Գոռ Աղաջանյանը, Վարդինե Գրիգորյանը, Մարիետա Թեմուրյանը, Նազելի Մովսեսյանը, Անի Չատինյանը, Արմինե Սադիկյանը, Սուզաննա Ղարաղաշյանը, Լիլիթ Ղամբարյանը, Շողեր Հակոբյանի 07.04.2014 թ. դիմում են ներկայացրել՝ պահանջելով զերծ մնալ պարտադիր կուտակային կենսաթոշակային վճարումներ հաշվարկելուց և վճարելուց:

2014 թվականի ապրիլի 2-ին ՀՀ Սահմանադրական դատարանը, անդրադառնալով «Կուտակային կենսաթոշակի մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) որոշ դրույթների սահմանադրականության հարցին, 1-ին կետով որոշել է Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի, 7-րդ հոդվածի 1-ին և 11-րդ մասերի և 13-րդ հոդվածի 2-րդ մասի դրույթը՝ այն մասով, որով չեն ապահովվում յուրաքանչյուր անձի հայեցողությամբ իր սեփականությունը հանդիսացող աշխատավարձի տիրապետման, օգտագործման և տնօրինման իրավունքը և հանգեցնում են մարդու կամարտահայտությունից անկախ նրա սեփականության իրավունքի սահմանափակմանը, ճանաչել ՀՀ Սահմանադրության 8-րդ հոդվածի 1-ին մասի, 31-րդ և 43-րդ հոդվածների պահանջներին հակասող և անվավեր:

Նույն որոշման 7-րդ մասում ՀՀ Սահմանադրական դատարանը, վկայակոչելով «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 68-րդ հոդվածի 15-րդ մասը, սահմանել է, որ ՍԴՈ որոշմամբ ՀՀ Սահմանադրությանը հակասող ճանաչելու իրավանորմերի ուժը կորցնելու վերջնաժամկետը 2014 թվականի սեպտեմբերի 30-ն է:

ՀՀ Սահմանադրական դատարանի կողմից կայացված որոշումը գործնականում այն կիրառման մեջ դնելու առումով առաջացրել է անորոշություն:

---

[1] Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի Վանաձորի գրասենյակ

«Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 68-րդ հոդվածի 8-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ Սահմանադրական դատարանը կարող է ընդունել հետևյալ որոշումներից մեկը.

....

վիճարկվող ակտն ամբողջությամբ կամ մասամբ Սահմանադրությանը հակասող և անվավեր ճանաչելու մասին:

Նույն հոդվածի 15-րդ կետի համաձայն՝ Սահմանադրական դատարանը, տվյալ ակտը ճանաչելով Սահմանադրությանը հակասող, կարող է իր որոշման մեջ հետաձգել այդ ակտի իրավաբանական ուժը կորցնելը:

Ինչպես նկատեցինք, վերը նշված նորմում մի դեպքում, երբ անհրաժեշտ չէ օրենքի ուժը կորցնելու այլ ժամկետ սահմանել, ՀՀ Սահմանադրական դատարանը որոշում է նորմը ճանաչել ՀՀ Սահմանադրությանը *հակասող և անվավեր*, այսինքն տվյալ պահից ուժը կորցրած, իսկ այն դեպքում, երբ անհրաժեշտ է սահմանել նորմի ուժը կորցնելու այլ ժամկետ, Սահմանադրական դատարանը նորմը ճանաչում է Սահմանադրությանը *հակասող* և նորմի ուժը կորցնելու ժամկետ է սահմանում:

Քննարկվող դեպքում ՀՀ Սահմանադրական դատարանը իր որոշման 1-ին կետով պարտադիր բաղադրիչը, այնքանով, որքանով չի ապահովում սեփականատիրոջ հայեցողության ապահովումը, ճանաչել է ՀՀ Սահմանադրությանը հակասող և անվավեր, այսինքն տվյալ պահից հակասահմանադրական նորմերի գործողությունը դադարել է (տե՛ս «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 71-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետը), իսկ գործողությունը դադարած նորմի ուժը կորցնելու ժամկետ հնարավոր չէ սահմանել:

Ինչ վերաբերում է ՀՀ Սահմանադրական դատարանի որոշման 7-րդ կետի հետ առաջացած հակասությանը, ապա այս հարցին անհրաժեշտ է պատասխանել «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի պահանջներին համապատասխան:

Նշված օրենքի 24-րդ հոդվածի 7-րդ մասի համաձայն՝ հավասար իրավաբանական ուժ ունեցող նորմատիվ իրավական ակտերի կամ նույն իրավական ակտերի տարբեր մասերի միջև հակասության դեպքում պետական և տեղական ինքնակառավարման մարմինները ֆիզիկական ու իրավաբանական անձանց հետ հարաբերություններում պետք է կիրառեն ֆիզիկական և իրավաբանական անձանց համար նախընտրելի նորմատիվ իրավական ակտը կամ դրա մասը:

Վերոգրյալից ելնելով՝ կարելի է եզրակացնել, որ ՀՀ Սահմանադրական դատարանի որոշման մեջ առաջացած հակասությունը պարզելու համար անհրաժեշտ է առաջնորդվել «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածի 7-րդ մասին համապատասխան և պարզել, թե որն է ֆիզիկական և իրավաբանական անձանց համար նախընտրելի նորմատիվ ակտը կամ դրա մասը: Իսկ դա պարզելու համար առկա է միայն մեկ մեխանիզմ՝ աշխատողի վարքագիծը:

Վկայակոչված նորմերի մեկնաբանությունից կարելի է եզրակացնել, որ գործատուի՝ կենսաթոշակի պարտադիր պահումները հաշվարկելու և վճարելու պարտականությունը կարող է վերաբերել միայն այն դեպքերին, երբ աշխատակիցը ցանկանում է կատարել կուտակային կենսաթոշակի վճարը:

Հիմք ընդունելով Կազմակերպության 17 աշխատակիցների դիմումները՝ 2014 թ. ապրիլի 13-ին Կազմակերպությունը՝ ի դեմս մասնակիցների, որոշում են կայացրել[2] պարտադիր կուտակային կենսաթոշակային վճարները չհաշվարկելու և չվճարելու մասին:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով «Հասարակական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 3-րդ մասը, ՀՀ Սահմանադրության 1-ին, 3-րդ, 6-րդ, 27.1-րդ, 31-րդ, 42-րդ հոդվածների պահանջները՝

ԽՆԴՐՈՒՄ ԵՆՔ

առաջնորդվելով ՀՀ Սահմանադրությամբ երաշխավորված սեփականության իրավունքի գերակայությամբ և այն հանգամանքով, որ սեփականության իրավունքի սահմանափակումները վարձու աշխատողների կամային հայեցողությամբ որոշելու սահմանադրորեն ամրագրված իրավունքն է, ինչպես նաև հիմք ընդունելով Կազմակերպության աշխատակիցների գրավոր դիմումները՝ մինչև 19.04.2014 թ. էլեկտրոնային հաշվետվությունների թիվ 86.ԱՄՓՈՓ ՀԱՇՎԱՐԿ՝ եկամտային հարկի և պարտադիր կուտակային վճարի ամսական ձևում կատարել փոփոխություն՝ ապաակտիվացնելով պարտադիր կուտակային վճարի հաշվարկման դաշտի ավտոմատ լրացումը՝ տալով հայեցողական լրացման հնարավորություն:

Կից ներկայացնում եմ՝

1. 07.04.2014 թ. Կազմակերպության աշխատակիցների դիմումների պատճենները,
2. 13.04.2014 թ. Կազմակերպության արձանագրության պատճենը:

Հարգանքով
կազմակերպության նախագահ՝ Արթուր Սաքունց

[2] Տես կից 2-րդ փաստաթուղթը